

նում մի նոր հոգեսր կեանքի՝ նա տալ չէր կարող, այլ ինքն իսկ կարօս էր այդպիսի մը կըրտութեան: Բայց նորա ապաշխարութեան մըրտութիւնը կենդանի և շօշափելի օրինակով ցոյց էր տալիս, որ ակնկալեալ, և իւր կարապետութեամբ սկսուող Աստուծոյ արքայութեան ուրախութիւններին մասնակից լինելու իրաւունք չէ ընծայում ոչ Արքահամի զաւակ լինելը և ոչ ուրիշ որ և է արտաքին արտօնութիւն, այլ միայն մի լուրջ նախապատրաստութիւն՝ սրտապին ապաշխարութեամբ, հոգեսր լուացմամբ: Ամենակալի առաջ մինչ ի գետին խոնարհելով, սեփական բոլոր ցանկութիւններն ու կրթերը թողնելով և նորա սուրբ կամքին միայն հպատակելով:

Զուր տեղը չէ, որ առանձնապէս հայ ժողովուրդը մեծ սիրով կապուած է «եօթնանուն սուրբ Կարապետի» հետ և բազմաթիւ գեղեցիկ, շատ անգամ ըստ երեւութիւն նորա պատմական կոչման անհամապատասխան, աւանդութիւններ ու երգեր է հիւսել նորա անուան շուրջ: Հարաբազդ կեանքի գտոն հարուածները սովորեցրել են՝ իոր ըմբռնելու յանձին Ս. Յովհաննէսի մարմնացած ապաշխարութեան և յօժար կամքով զրկանքներ կըրելու անհրաժեշտ կարիքը ճշմարիտ քրիստոնէի համար: Ս. Կարապետից իւր սրտի մուրաստն առնելու նպատակաւ հօթ տարի սրա պահող ու իստաւորը խորհրդաւոր կերպով ենթարկուում է քրիստոնէութեան այն ամենամեծ գաղափարին, թէ սրբութիւն և զգաստութիւն անհրաժեշտ պայմաններ են սրտի սուրբ իդակերին համար. թէ երանութեան զրախոտի ճանապարհը նեղ է, փուշ ու տատասկով ծածկուած, և խստամբերութեամբ այդ փշերը կոխելը կրթերը սանձելով և ցանկութիւնները սահմանի մէջ զընելով այդ ներ ճանապարհը բռնել պէտք է:

Այսպէս ահա Ծիրոջ ճգնազգեաց կարարապետը առաջնորդում է իրեն հետեւողներին և իւր քարոզի համաձայն ապաշխարողներին գեպի երկնային զրախոտը, գեպի Աստուծոյ արքայութիւն և ճշմարիտ անանց ուրախութիւն:

ՀԵՐՈՎԴԵՍ ՄԵՇ.

Այս անունը ծանօթ է ամրող քրիստոնեայ աշխարհին, իրեւ ամենազարհուրելի և ատելի բռնաւորի անուն՝ թեմզեհէմի մանկանց կոտորածի պատմութիւնից. մասնաւորապէս մեր մէջ նա յայնի է նաև այն յարարերութիւնից, որ Խորենացու պատմելով եղել է Հերովդէսի և Արքար թագաւորի մէջ: Սակայն թէ ինչ մարդ էր նա իսկապէս և ինչ զեր է կատարել պատմութեան մէջ՝ շատ քըրչերը երեւ այդ մասին որոշ զաղափար ունին, և ուրեմն շատերի համար հետաքրքիր պէտք է լինի համառաօտ կենսազրութիւնն այդ արիւնածարաւ թագաւորի: որի անունը կապուած է խաղաղութեան և ճշմարտութեան թագաւոր՝ աշխարհի Փրկչի յայտնութեան հետ:

Հերովդէս հին ազնուական ցեղից չէր: Խաղաղէս յայտնի է Փրկչական թուականից 168 տարի առաջ Մատաթէ քահանան Անտիոքոս Դ. Եպիփանի հանած հալածանքի զէմ զուխ բարձրացրեց և վրէժինդիթ հանդիսացաւ Խորսցէլի Աստուծոյ սրբութիւններին հասցրած անարգանքի համար. նորա հերոս որդին՝ Յուղա Մակարէ, հայրենի կրօնի նախանձամնդիր մի քաջարի խմբի զլուխ անցած, ոչ միայն երուսաղէմը մաքրեց այլազգիներից և Ծիրոջ պաշտամունքը վերահսատատեց, այլ և սկիզբ զրաւ մի անկախ հրեական իշխանութեան, որ նորա եղբօր թոռ Յուղա Արիստորուզոսի օրով, 105 թ.-ին ն. թ., թագաւորութեան փոխուեցաւ: Մատաթէկի մի նախահօր անունով այս իշխանական տունը, որ շուտով քահանայապետութիւնն ես սեփականնեց, հասմոնեան է կոչուում: Կամ Յուղա Մակարէի անունով Մակարայիցի: Այս առաջ վերջին շառաւղին էր մեր պատմութեան մէջ ծանօթ Հիւրկանոս Բ. մեղկ և անընդունակ քահանայապետը, որ զին նշանաւոր Աղեքսանդրա թագուհու, որ մեծ ընծաներով ընդունել էր Հայոց Ծիրան Բ. թագաւորին, երբ նա տհագին զօրքով Պաղպեսամինի վերայ արշաւեց: Հիւրկանոսի ա-

նուան ներքոյ իսկական իշխանութիւն փարողն էր Անտիպատրոս անունով մէկը, որ եւ կել էր Հրէկից ցեղակից և յիշեալ Արխառորու զոսի օրով հրէական օրենք ընդունած Նոմանցւոց երկրից, բայց որոշ յայտնի չէ, թէ արդեօք նա ինքն ևս բնիկ եղումայեցի՞ էր աղջաւ։ Անտիպատրոս շուտով հասկացաւ, որ փօխանակ չիւրկանոսի՝ աւելի ձեռնառու էր նորա վերայ գերիշխող հռովմայեցիներին ծառայել, և կարողացաւ այնպիսի ճարտարութեամբ ուղղել իւր զործերը, որ շուտով Հրէաստանի դատաւոր (պրոկուրատոր) նշանակուեցաւ և համարձակութիւն ստացաւ նոյն իսկ՝ իւր երկու օրդիներից Փաղայէլին կառավարիչ նշանակել երուսաղէմում, իսկ Հերովդէսին Գալիլիայում։ Այդպիսով պատմութեան ասպարէզ ելու 25 տարեկան հասկում մեզ ծանօթ Հերովդէսը։

Շատ չանցած առիթ ներկայացաւ նորան իւր ինչ եղածը ցոյց տալու։ — Երուսաղէմում չիւրկանոսի նախագահութեամբ ծերակոյտն ատեան էր նսաել (47 կամ 46 թ.-ին ն. թ.) և դատի հրաւիրել Հերովդէսին հակառակ ծերոկոյտի իրաւանց մահուան վըճիռ արձակած լինելուն համար։ Հերովդէս ներկայացաւ, բայց ծիրանի հաղած, պմնուած, սպառազէն թիկնապահներով շրջասպառուած, այնպէս որ նորա անակնկալ տեսքը փակեց ծերակոյտի անգամների բերանը, ամենից առելի երկիւղի մէջ էր ինքը չիւրկանոս, մասնաւանդ որ Ասորիքի հռովմայեցի կուսակալը պատուէր էր ու զարկել նորան լաւ վերաբերուել գէպի Հերովդէս։ Մա, շփոթուած, նիսար վաղուան ձգեց և այդ միջոց եղաւ Հերովդէսին գիշեր ժամանակ խոյս տալու և մի զօրեղ բանակով յայտնուելու Երուսաղէմի պարխապների առաջ, արդէն իրրե դատաւոր և գրէմինդիր իրեն հասցրած անարդանքի համար թէկե յարգելով հօր և եղրօր միջնորդութիւնը նա շուտով ետ քաշուեցաւ, բայց այդքանին էլ բաւական էր, որպէս զի հրէաներին իւր ոյժը ցոյց տար։ Մի քանի տարի յիտոյ երր Անտիպատրոս մեռաւ, կարող էր ասպահով լիներ որ իւր սկսածը շարունակելու համար արժանի ժամանդ է թողնում։ Այդ միջոցին Հերովդէս արդէն Ասորիքում կուսակալ էր

նշանակուել և յաջողել էր այնպիսի ճարպիկ քաղաքականութիւն բանեցնել որ Հռոմի արագութեամբ միմանց յաջորդող իշխանաւորները բարոքիկան բարեհամաց էին գէպի նաև թշնամի հրէաների բոլոր բողոքաներն ու մեքնայութիւնները չկարողացան ձգել նորան, ընդհակառակն Անտոնիոս նորան և նորա եղբայր Փաղայէլին հրէաստանի չորրորդապետներ կարգեց։

Այդ ժամանակ նորա համար մի վճռական բուպէ վրայ հասաւ։ Հիւրկանոս թուի Անտիպոնոս անունով մի եղբօրորդին օգուտ քաղելով Պարթեների արշաւանքից և իւր կողմն ունենալով հրէայ ազնուականութիւնն ու ժողովրդի համակրօւթիւնը, իրրե համանեան տան (թէպէտ անարժան) շառաւիդ, թագաւոր հրատարակեց իրեն։ Հիւրկանոս և Փաղայէլ գերի էին ընկել Պարթեաց ձեռքը, Հերովդէս մօտիկ ոչ մի տեղից օգնութիւն սպասել չէր կարող առանց երկար տատամսելու նա իւրայիններին սպասողարեց մի ամուր բերդի մէջ և ինքը շատ արգելքներ յալգելով հռոմ հասաւ։ Այդտեղ նա իւր ճարպիկութեամբ և թանկացին ընծաներով այնպէս զրաւեց իշխանապեա Անտոնիոսին ապա և Ոկտաւիանոսին, որ Հռոմի ծերակոյտը եօթն օր չանցած, 40 թ.-ին ն. թ., հանգիստուոր կերպով նորան հրէաստանի թագաւոր հրատարակեց։ Միեր Հերովդէսի համար ոչինչ շարժէր ի հարկե, որ նա՝ Հրէկից Աստուծոյ երկրպագուն և օրինապահ հրէաների նոր թագաւորը, իւր երախտազիտութիւնն արտայացաւ Կապիտոլիոնում աստուածներին զոհեր մատուցանելով։

Սակայն նա գեռ անունով միայն թագաւոր էր, պէտք էր նախ երկիրը նուածել, որ և կարճ միջոցում զլուխ հանեց ու պաշտեց Երուսաղէմը։ Քաղաքացիք առանձին պատճառ չունեին սիրով ընդունելու այս կէս-Հրէկայ թագաւորին, բայց ստիպուած էին ուժի առաջ տեղի տալ և զռները բանալ հռոմայեցի զօրքը ներս խուժեց և անինայ կողոպացի ու կոտորեց ձեռքն ընկածը, մինչեւ որ Հերովդէս իրեն տէր զգաց քաղաքին և դագար առնելու հրաման տուաւ։ Անինայ վարուեցաւ նա մահաւանդ հակառակ կու-

սակցութեան՝ ազնուական գասիր ներկայացուցիչների հետ, որոնցից 40 հազի զիմաստեցան և նոցա հարստութիւնը գործ դրուեցաւ Անտոնիոսին ու նորա բարեկամներին երախտահատոց լինելու:

Դիրանով ամեն ինչ չի բարջացաւ Նականութեան էր առել Հիւրկանս Բ.-ի թռաննման գեղեցկուհի Մարիամներին, որին անսանձ կերպով սիրում էր իսկ Մարիամնեի մայր Աղեքսանդրան իւր իշխանասիրական ձգտումներով և ճարպիկութեամբ ամեննեին յետ չէր մնայ նոյն իսկ Հերովդէսից: Նա ուներ 16 տարեկան Արիստորուղոս անունով մի որդի, այնպիսի փայլուն գեղեցկութեան աեր, որ աենադներն ասում էին՝ նա չէ կարող հողածնի դաւակ լինել: Բնականարար Աղեքսանդրան աւելի իւր որդու փառքի համար էր մատածում քան փեսայի: Նա զիմեց Եղիպատոսի յայտնի Կղեռպատրա թագուհու միջնորդութեանը, որ Արիստորուղոսին քահանայապիտ կարգեն և Կղեռպատրան, որ զուր աշխատել էր Հերովդէսին Հռոմ ճանապարհորդելու ժամանակ իւր ցանցի մէջ ձգել, շտապեց հրաւիրել Անտոնիոսի ուշազրութիւնը գեղեցի իշխանականի վերայ: Սակայն Հերովդէս խոհեմութիւն համարեց չարիքներից փոքրագոյնն ընտրել և ինքը քահանայապետութեան պատիւ շնորհեց Արիստորուղոսին: Աղեքսանդրան գոհ էր ի հարկէ, բայց չբաւականացաւ գորանով Հերովդէս նորան և որդուն բանաարկուածի պէս էր պահում, իսկ նորան ազատ շարժում էր հարկաւոր. մեծ զգուշութեամբ պատրաստուեցաւ նա փախուստ տալու որդու հետ Կղեռպատրայի մօտ, բայց Հերովդէս ժամանակին իմացաւ դաւադրութիւնն ու առաջն առաւ. թէե Կղեռպատրայի ահից չհամարձակուեցաւ նա դաւադիմներին պատմել բայց մի յարմար առթի էր սպասում փանգաւոր ախոյիանին մէջտեղից վերցնելու, և առիթը ներկայացաւ:

Արիստորուղոս առաջին անգամ ճաղաւարահարաց տօն պէտք է կատարէր. քահանայապետական պերծ զգեստների մէջ առելի ևս փայլող նորա զեղեցկութիւնը, նորա շնորհալի շարժուածքը մեծ ողերութիւն յա-

ռաջ բերին ժողովրդի մէջ և վերակենդանացրին նորա նախնեաց պահածալի գործերի յիշատակը: Հանդիսից յետոյ թագաւորի մօտ շքեղ հացկերոյթ կար. Հերովդէս հրաւիրեց պատանի քահանայապետին ընկերանալ ուրիշ երիասարդ հանգիստականների և զովսնալ երեկոյեան հային՝ պալատի աւազանների մէջ լողանալով. թագաւորի մարդիկ այնափ պահեցին նորան ջրի տակ, որ զուրս բերին արդէն խեղդուած: Չնայելով որ Հերովդէս բարձրաձայն ողբերով իւր կակիծն էր արտայալաւմ և հանգուցեալին մէծ շուքով թաղել տուաւ, բայց համոզել մանաւանդ Աղեքսանդրային թէ ինքն անմեղ է՝ հարկաւ չէր կարաղ վերջինս ուղղեց իւր յուսահատ բողոքը կրին Կղեռպատրային, և Հերովդէս Անտոնիոսի առաջ դատի կանչուեցաւ. բայց նա վերադարձաւ, ի զարմանս ամեննեցուն արդարացած, և աշա սկսուեցան արիւնալի տեսարաններ սեփական ընտանիքի մէջ: Նորա Հօրեղարայր և միանդամայն Սաղոսչ քրոջ ամուսին Յովսէքը, որին յանձննել էր իւր կին Մարիամներին՝ պայման զնիով սպանել, երբ ինքը չվերագաւանայ, որպէս զի Անտոնիոսի ձեռքը քննին՝ մահուան դատապարտուեցաւ Սաղոմէի ամբաստանութեամբ, իրոյ թէ մոներիմ յարաբերութեան մէջ էր եղել Մարիամնեի հետ. Աղեքսանդրան բանապրկուեցաւ, իսկ Մարիամնեն հազիւ խուափեց այս անգամ գառականացաւ:

Սակայն Կղեռպատրան չէր դադարում Հերովդէսի գէմ մէքենայութիւններ լարելուց: Նա եղաւ պատմաւ, որ Հերովդէս փոխանակ իւր ժողոված զօրքով Անտոնիոսին օգնութեան զնալու ստիպուած էր Արարացուոց թագաւորի գէմ պատերազմ վարել, Կղեռպատրան կարծում էր, թէ նա կոր ի զըլու և կը մնայ այսակեղ բայց նա յալթութեամբ վերադարձաւ և այն օգուտն ունեցաւ, որ Ոկտաւիանոսի գէմ մզուն պատերազմում չէր մասնակցել: Վերջինս թէե զիտէր նորա Անտոնիոսի բարեկամ լինելը, բայց հասկացաւ շուտով որ ինքն ևս այգպիսի բարեկամութիւնից շատ օգուտ քաղել կարող է. ուստի երբ նա բերաւ թաղը իւր ոտքերի առաջ զրաւ՝ Ոկտաւիանոս Օգոստոս կրին պը-

սակեց նորան, և իւր յաջորդ արշաւանքների միջոցին առիթ ունեցաւ մի քանի անգամ օգտուելու նորա ծառայութիւնից: Երբ Օդոստոս վերջնական յաղթութիւն տարաւ Անտանիսի գէմ, չերովդէս նորա մօտ զնաց անձամբ շնորհաւորելու ընդարձակեց իւր իշխանութեան սահմանները շուքով ճանապարհ ձգեց նորան մինչև Անտիոք և ապա իւր յաջողութիւններով յդփացած Երուսաղէմ վերադարձաւ:

Այսաեղ կրիսուեցան ընտանեկան սարսափները: Սալոմէն այս անգամ իւր ամբաստանութիւններն այնպէս յաջողութեամբ տարաւ, որ ոչ միայն Մարիամնէի երկրորդ խնամակալ Սոհեմը, նախին կասկածների ներքոյ, մահուան գատապարտուեցաւ, այլ նոյն ինքն Մարիամնէն: Բայց սիրելի ինոջ մահը փօխանակ չերովդէսի նախանձը յագեցնելու, ցնցեց նորա ամբողջ եւոթիւնը. նա չէր կարող շատ անգամ հաւատալ, որ Մարիամնէն մեռած է, և անզուսպ կատաղութեամբ պահանջում էր ծառաներից, որ գանեն բերեն նորան: Այդ ժամանակ զարհուրելի ժանտախտ ևս յառաջ եկաւ Երուսաղէմում, որ իրրե աստուածային պատիթ պէտք է նկատուելո, և վերջապէս ինքը չերովդէս հիւանդացաւ մի անբուժելի համարուող հիւանդութեամբ: Ազեքսանդրան, որ իւր թշուառ կեանքն ազատելու համար, վատարար դստեր սպանողի կողմն էր անցել, այժմ ուրախութեան յայտնի նշաններ էր ցոյց տալիս: Բայց թագաւորն առողջացաւ, իմացաւ նորա այդ վարմունքը և, գեռ անկողնում, մահուան վճիռ տուաւ: Մի քանի այդպիսի վճիռներ ևս եղան մինչեւ նորա կատարեալ առողջանալը, երբ սկսուեցաւ նորա կեանքի մի նոր փայլուն շրջան:

Տէրութեան ամեն կողմերում փառաւոր շնչեր սկսան կառուցանել՝ առաւելապէս Օգոստոս կայսեր անուան նուիրած Կեսարիա քաղաքում և Սամարիայում, որ նոյնպէս ի պատի կայսեր Սերաստիա կոչումն ստացաւ Առհասարակ չերովդէս ոչ մի ջանք և ոչինչ ծախք չէր խնայում կայսեր բարեկամութեան արժանի լինելու, որ և փայելում էր կատարելապէս: Բայց այդ նպատակին

հասնելու համար նա պէտք է սուրբ երկրի և սուրբ քաղաքի մէջ մոցնէր բազմաթիւ հեթանոսական հաստատութիւններ և սովորութիւններ, որնք յանչափս ատելի կը դարձնէին նորան հրեայ ժողովրդի աշքում, եթէ նա այդ ժողովսւրդի սիրաը զրաւելու միջոցներ ևս չգտնէր: Դիմաւորը զոցանից այն էր, որ նա հիմքից նոր կառուցանել առւաւ Երուսաղէմի տաճարը բոլոր իւր շինութիւնների թագն ու պատկը և այնպիսի մէծ արուեստիւ շքեռթեամբ զարդարեց այն, որ ժամանակակիցներն ասում էին՝ այդ տաճարը չափուողը ոչինչ գեղեցիկ բան չի տեսել: Չերովդէս ձգտում էր այսպէս հելլենական քաղաքակրթութիւնն ու հրեական ողին միացնել՝ մի անհսասնելի ձգտում, որ միացած ընտանեկան զգաութիւնների հետ, նորաթագաւորութեան կործանման պատճառ պէտք է լինէր:

Մարիամնէի ամուսնութիւնից չերովդէս ուներ երկու որդի՝ Ազեքսանդր և Արիստորուզոս, որոնք կրթութիւն էին առել չոռմում: Օգոստոսի մտերիմներից մէկի տանը, և վերագարձից յետոյ զրաւում էին շատերի ու շաղբրութիւնն իրենց գեղեցկութեամբ և բարեձեռութեամբ: Բայց նոցա մօր թշնամիները յաջողեցին շուտով նոցա գէմ ևս կասկած զարթեցնել չերովդէսի սրտում, որ նոցա հակառակ պալատ բերել տուաւ մի ուրիշ կնոջից ունեցած անդրանիկ որդուն՝ Անտիպատրոսին, և այսպէս, խարդաւանակներն այնչափ զօրացան թագաւորական ընտանիքի մէջ, որ չերովդէս՝ իւր որդիների հետ մի քանի անգամ զժտելուց և հաշտուելուց յետոյ վերջապէս մահուան վճիռ արձակեց նոյցա գէմ: սպանել տուաւ նախ 300 հոգի այն անձերից, որոնք համարձակուել էին համակրութիւն ցոյց տալ նոցա, ապա խեղգել հրամայեց երկուսին մէկուել Սերաստիայում: Գահը մտում էր այդպիսով Անտիպատրոսին, որ տեսնելով թէ իւր արդէն 70 տարեկան ծերունի հայրը մտաղբրութիւն լունի հեշտութեամբ հրաժարուելու աշխարհից՝ փութացնել կամեցաւ նորա մահը, բայց բռնուեցաւ և բանտը զրուեցաւ:

Զառամենալ թագաւորը զրու աշ-

Խատում էր իւր ճերմակ ալիքը թուխ դարձնել. մի զղուելի ախան նորան արագ քայլերով դեպի գերեզման էր տանում և նորան տանջում էր մանաւանդ այն միտքը, թէ մահից յետոյ ոչ ոք չպէտք է ցաւի նորա վերայ: Թէ և անկողնի միջից նա կարողացաւ Երուսաղեմում ծագած մի ապրատամբութիւն ճշշել և պարագուխներին կինդանւոյն այրել տալ բայց այդ նորան գոհացնել չէր կարող: Հստ Յօվսեպոսի, նաև Հըրամյալ էր Երուսաղեմի բոլոր պատուաւոր քաղաքացիներին մի տեղ ժողովել որպէս զի իւր շունչը փշելուն պէս նոցա գնդակահար անեն, և այգպէս իւր մահը առանց ողբերի չմնայ: Բայց վճռական բոպէն չէր մօտենում. նա գանակ առաւ մի անդամ ինձնոր կճպելու, և երբ կամենում էր նորանով վերջ գնել իւր դառն կեանքին, վեսան ճշալով վրայ ընկաւ և խլեց. ճիշը լսելի եղաւ սրալատում և ամենք կարծեցին, թէ թագաւորը մեռել է. իմացաւ այդ նաև Անտիպատրոս բանտում և ազատ չնչեց. իսկոյն նորա ուրախանալու լուրը չերովդէսին հասցրին, որ մարդիկ ուղարկեց՝ նորան տեղն ու տեղը սպանելու և թաղելու: Ապա նա իւր թագաւորութիւնը բաժանեց երեք որդիների մէջ, որոնցից Արքեղացոս թագաւոր մնունը պէտք է կը էր, և մեռաւ հինգ օրից յետոյ: Որդիքը նորան շատ մեծ հանդիսով թաղեցին: Պատմութիւնը նորան Մեծ անունը տուաւ, տարբերելու համար իւր չնչին որդի չերովդէս Անտիպաս չորրորդապետից բայց այդ Մեծ չերովդէսի անունը հազիւ թէ յիշողներ գտնուէին, և թէ նորա զարհուրելի գործերի յիշատակը չարձանագրէր ընդ միշտ իւր մէջ թեթզեհէմի մանկանց կոտորածի պատմութիւնը, և թէ նոյն այն ժամանակ, երբ չքեղ պալատում տանջուում էր նա մահուան տափնապով և կասկածներով, նորա տէրութեան մի խուլ անկիւնում մի նոր թագաւոր ծնուած չինէր՝ նսրայէլի իսկական թագաւորը և կատարեալ հակատիպն այդ ողորմելի բռնաւորի:

Չերովդէս մեռել է այժմեան քրիստոնեական թուականից 4 տարի առաջ, որից չետեւում է, թէ մեր ներկայ հաշիւը սիսալ է. Քրիստոս ևս 4 տարի առելի առաջ պէտք է ծնուած լինի, քան մենք հաշուում ենք:

ԳՐԱԽՍԹԱԿԱՐԱՅԻՆ.

Քննական կրօնագիտութիւն, հանդերձ ապացուցութեամբը կրօնից. — Տէր Սահակ քահանայի Տէր Սարգսեան: Բ. տպ. կ. Պուլս. 1897: — Այս զրքի առաջին տպագրութիւնը լոյս է տեսել 1874 թ.-ին և այդ օրուանից ի վեր առանձնայատուկ, աչքի ընկնող տեղ է բռնում մեր եկեղեցական զրականութեան մէջ: 23 երկար տարիների ընթացքում նա ուղեցոյց է եղել բազմաթիւ կրօնուսոյցների, այս նաև կրօնի գասապքերի զրոյների համար, բայց լոյս չէ տեսել ոչ մի վրօնագիտութիւն, որ իւր ճոխութեամբ և ինքնուրոյնութեամբ գոնէ ի մօտոյ հաւասարութիւնը նորան, այնպէս որ նա այժմ ևս առաջինն է իւր տեսակի մէջ, ուրեմն և նորա Բ. տպագրութեամբ լոյս տեսնեն առանձին ուշագլրութեան արժանի մի երեսից: Դրքի արժանայարդ չեղինակը ապրում է զեռ քարուք ծերութեամբ, և, ինչպէս երեւում է, մինչեւ վերջն անընդհատ աշխատել է իւր զրուածքի վերայ, սրբագրութիւններ ու յաւելուածներ անելով, և ահա յառաջ է եկել 1038 էջ ունեցող մի խոշոր զիրք, մինչ Ա. տպ.-ը միայն 23+579 էջ ունէր: Այս փոփոխութիւնը չի վերաբերում զրուածքի ընդհանուր ուղղութեանն ու նիւթի զասաւորութեամբ. զլուխների բաժանումը նոյնն է մնացել, միայն ներածութեան մի մասը աւելի ընդարձակ ձեռով փոխագրած է. «Բ. զրքի» մէջ և կազմում է այսաեղ «Ա. մասի» Զ. և Է. յօդուածները. իսկ Բ. մասի Ա. զիսի Բ. յօդուածի վերջը աւելացրած է մի Դ. հատուած՝ «Սպատակք և արդիւնք տնօրինութեանց Փրկչին», որ բռնում է 365—386 էջ:

Քանի որ խօսքը նիւթի դասաւորութեան մասին է՝ նկատենք, որ այս կետը զրուածքի ամենաթոյլ կողմերից մէկն է: Թէ ինչ սկզբունքի ներքոյ կրօնի ամբողջ առարկան չըրս զրքերի է բաժանած. — Ա. Աստուծոյ էութիւնը և անոր զործոց վերաբերեալ վարդապետութիւնները. Բ. Աստուծոյ առ մարդ Յայտնութիւնը. Դ. Եկեղեցին և անոր խորհուրդները, և Դ. Յաւիտենական կենաց վարդապետութիւնը. ինչպէս են կարելի դառ-